

Խաղաղության համար

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ «ՄԵՐ ԱՇԽԱՐՀԸ, ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀՈՒՅՍԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

1979 թ. հոկտեմբերի 29-ից դեկտեմբերի 4-ը եղբայրական Վրաստանի մայրաքաղաքում իր աշխատանքները գումարեց Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի «Մեր աշխարհը, նրա խնդիրներն ու հույսերը» թեմայով միջազգային հանձնախումբը:

Հանձնախմբի մասնակիցների առջև ողջույնի և բացման խոսքով հանդես եկավ Համայն Վրաստանի Պատրիարք-կաթողիկոս Իլիա Բ-ը:

Սույն աշխատանքներին, որին մասնակցում էին 16 երկրներից ժամանած 41 մասնակիցներ, հանուն Վեհափառ Հայրապետի իր մասնակցությունը բերեց նաև վրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը, որը ժողովի մասնակիցներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի ողջույններն ու օրհնությունները:

Հանձնախումբը, որի ղեկավարության կազմում են Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի գլխավոր քարտուղար դոկտոր Լյուբոմիր Մերեժովսկին (ՉՍՍՀ), պրոֆ. Գերհարդ Բասսարակը (ԳԴՀ) և ուրիշներ, շուրջ հինգ օր տևած այս հավաքույթի ընթացքում մեծ ուշադրություն դարձրին միջազգային մի շարք հարցերի՝ խաղաղության պահպանման, ժողովուրդների միջև համերաշխության և այդ առթիվ քրիստոնյաների ունեցած դերի ու պատասխանատվության մասին:

Դեկտեմբերի 2-ին ժողովի մասնակիցները վրացական հնագույն մայրաքաղաք Մցխեթիի «Սվետիցխովելի» Մայր տաճարում կատարեցին էկումենիկ ոգով համատեղ մի աղոթք աշխարհի խաղաղության համար, որին իր մասնակցությունը բերեց նաև տ. Գևորգ սրբազանը:

Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 4-ը հյուրերը ծանոթացան եղբայրական Վրաստանի տեսարժան շատ վայրերի և անմոռանալի տպավորություններով մեկնեցին այդ հյուրընկալ հողից: